ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՈՆԸ

Առաջիկայ հոկտեմբերի 13-ին համայն հայութիւնը տօնելու է ՀԱՅ ԳՐԻ 1500 և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ամեակները։ Վեհափառ Կաթողիկոսի նախագահութեամբ ս. Էջմիածնում մեր գիտնական բարձրաստիճան հոգևորականներից և Գէորգեան Ճեմարանի ուսուցչապետներից կազմուած է Յօբելեանական Կենտրոնական Մասնաժողով։ Ս. Էջմիածին են գնալու հայութեան բոլոր խաւերից պատգամաւորութիւններ և ուխտաւորներ։ Յօբելեանական հանդէսը սկսելու է ս. Միւռոնօրհնէքով (սեպտ. 30-ին)։ Պատարագիչը լինելու է Վեհափառ Կաթողիկոսը տասներկու եպիսկոպոսներով։ Ապա լինելու է եպիսկոպոսական ձեռնադրութիւն, որ եկեղեցական մի շքեղ հանդէս է։ Յետոյ յօբելեանական տօնախմբութիւնը՝ հանդէս, դասախօսութիւններ Ճեմարանում և ուխտագնացութիւն ՕՇԱԿԱՆ, ուր ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ գերեզմանի վրայ կըկատարուի հոգեհանգիստ և յետոյ մաղթանք ու թափօրը կըվերջանայ Օշականի պատմական այգում ժողովրդական մեծ խնճոյքով, շրջակայ վանքերում ուխտագնացութիւնով։

Ազգային այդ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ առիթով Աղբիւրի և Տարազի հոկտեմբերի №№-ը ամբողջովին նուիրուում են ՀԱՅ ԳՐԻՆ և ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ։

Աղբիւրի Յօբելեանական այդ №-ը 50 կ., իսկ Տարազը 1 ր. դպրոցական այն աշակերտների համար, որոնք Տարազ չեն ստանում։

Այսօրուանից մինչև հոկտ. մէկը վաճառուում են՝ ս. ս. Էջմիածին, Սահակ, Մեսրոպ Թարգմանիչների, Հայոց-Խրիմեան Հայրիկը Օշականում ընտիր պատկերները 1000 հատը (իւրաքանչիւրից 250-ական օրինակ մի արկղում) 1000 ր.։ Հրաւիրուում են ձեռնհաս հաստատութիւններ ձեռք բերել այդ պատկերները և տարածել հայ ընտանիքներում։

Առանձին-առանձին այդ պատկերների հատը 1 ր.—50 կ.։

Ամենապատեհ նէր, որ հայութիւնը կարող է անել ինքն իրան՝ այդ նուիրական չորս պատկերներն են, որ գէթ այժմ հայը պէտք է իր դահլիճները պճնազարդէ։

Типографія «ГЕРМЕС» Графская № 6, Телеф. 566